Հայրապետական զոհունակութիւն եւ օրհնութիւն.

Կոնդակ օրհնութեան Շամախու վիճ. կոնսիստորիայի նախկին ատենադպիր պ. Աբրահամ Շահվերդեանի անունով նրա քառասուն և իննամեայ հաւատարիմ ծառայութեան առթիւ։ 8 *սեպտ. թ.* 1996.

— *Գոհունակութեան և օրհնութեան Գրոզնա քաղաքացի Տիկ. Մարիամ և պ. Գրիգոր Բէգլարեան ամուսինների անունով տեղական եկեղեցու զանգակատունն իրանց ծախքով շինելու համար։* 22 *սեպտ. թ.* 2099։

Հայրապետական պարգեւատրութիւն.

Կոնդակներ Երուսաղէմի վանքի միաբաններ՝ Տ. Արիստակէս վարդապետ Խաչատրեանի, Տ. Աւետիս վարդապետ Յովհաննիսեանի և Տ. Պօղոս վարդապետ Շահնազարեանի անունով, որոնց, պատրիարքական Տ. Տեղապահի միջնորդութեան համաձայն, շնորհուեց վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք. 20 *սեպտ. թ.* 2084, 2085 *և* 2086։

Կոնդակներ Նիկոպոլսի վիճակի Սիս գիւղի առաքելոց վանքի միաբան Տ. Վաղինակ վարդապետ Թորիկեանի և Սեբաստիայի ազգային վարժարանաց տեսուչ Տ. Շաւարշ վարդապետ Սահակեանի անունով, որոնց, (իրանց առաջնորդների միջնորդութիւնների համաձայն), վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 30 *սեպտ. թ.* 2154 *և* 2155։

Այս պարգևատրութիւնների կոնդակները յատուկ կոնդակով ուղարկուեցին Ի Պօլսոյ Ամենապատիւ Պատրիարքին ի գիտութիւն և հասուցանելու յիշեալ վարդապետներին։

ԲԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Սեպտ. 1-*ին, թ.* 539. *Սինոդը լսեց Բեսսարաբիայի նահանգի Բելցի քաղաքի բնակչուհի հանգուցեալ Մարիամ Ֆոքշանեանի կտակի գործը, որով հանգուցեալը ի միջի այլոց կտակում է իւր* 400 *դեսեատին տարածութեան կալուածի արդիւնքի* $^1/_4$-*մասը իբրև թոշակ Հայ-լուսաւորչական աղքատ երեխաների կրթութեան, արական և իգա-*

կան սեռի, առաւելապէս Բելցի հայ համայնքից. իսկ եթէ Բելցում այդպիսիներ չեն լինի՝ Բեսսարաբիայի նահանգի միւս հայ հասարակութիւններից. նոյն արդիւնքի $^1/_4$ մասը տրուելու է Բելցի քաղաքի Հայ-լուսաւորչական եկեղեցու եկեղեցական դասի պահպանութեան համար, այն պայմանով, որ եկամտի այդ մի քառորդ մասից իւրաքանչիւր տարի ուղարկուի 200 ռուբլի Աւստրիայի Սուչաւա քաղաքի Հայոց Ս. Խաչ եկեղեցու քահանայական դասին և 150 ռուբլի նոյն նպատակով Խերսոնի նահանգի Գրիգորիոպոլ քաղաքի Հայ-լուսաւորչական Ս. Խաչ եկեղեցուն. Արդիւնքի մի քառորդ մասը տրուելու է Բելցի հայերից աղքատ աղջիկներին օժիտ։ Որոշուեց. պատուիրել Նոր Նախիջևանի և Բեսսարաբիոյ կոնսիստորիային հսկողութիւն ունենալ կտակը ճշտութեամբ կատարուելու համար։

Սեպտ. 6-ին, թ. 545. Սինոդը լսելով Աղէքսանդրապոլի գաւառի Իլլի-Ղարաքիլիսա գիւղի հաւատարմատարների միջնորդութիւնը յիշեալ գիւղում ծխական եկեղեցու շինութեան թոյլտուութեան մասին՝ որոշեց. թոյլ տալ Իլլի-Ղարաքիլիսա գիւղի ծխականներին շինել գիւղում՝ ծխական եկեղեցի և այդ մասին յայտնել Երևանի նահանգապետին։

Սեպտ. 6-ին, թ. 549. Սինոդը լսելով Նոր Նախիջևանի հոգևոր կառավարութեան միջնորդութիւնը ծառայողների ռոճիկները փոփոխութեան ենթարկելու մասին՝ որոշեց. թոյլ տալ յիշեալ հոգևոր կառավարութեան փոփոխութեան ենթարկել ծառայողների ռոճկի բաշխումը, առանց դուրս գալու նախահաշուի ընդհանուր գումարի սահմանից։

Սեպտ. 6-ին, թ. 550. Սինոդը լսելով Նորին Սրբութեան օգոստոսի 24-ի № 1910 կոնդակը, որով յանձնում է Սինոդին Զանգեզուրի գաւառի Ճատկէն գիւղացի Նարինդիլ Ղարախանեանի նուիրած 100 ռուբլին և պատուիրում է գործադրել այդ գումարի $^0/_0$ $^0/_0$-ը Ճեմարանի օգտին, որոշեց. պատուիրել գանձապահին գնել այդ գումարով $^0/_0$-աբեր ռէնտա, որի տոկոսները միացնել Ճեմարանի վերայ գործադրուող գումարների հետ։

Սեպտ. 10-ին, թ. 560. Սինոդը լսելով աթոռապատկան Գէօգ-Թիլիսա գիւղի կապալառութեան գործը, որոշեց. Գէօկ-Թիլիսա կալուածը հանել Երևանի կոնսիստորիայի հսկողութիւնից և յանձնել Մայր Աթոռի վանական կառավարութեան տեսչութեան, և կոնսիստորիայի միջնորդութիւնը՝ գիւղը Ս. Տէր Գաբրիէլեանին վարձու տալու մասին թողնել առանց հետևանքի։

Սեպտ. 15-ին, թ. 566. Սինոդը որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին ուղարկել Երևանի արքունի գանձարանը 176 ռ. 10 կոպ. Մաստարա գիւղի հողաչափական 1909 թուականի հարկը։

Սեպտ. 15-ին, թ. 567. Սինոդը որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին ուղարկել Երևանի արքունի գանձարանը 2800 ռ. 92 կ. Վաղարշապատ և Օշական գիւղերի պետական հողային և զեմսկի հարկերը 1910 թուականի։

Սեպտ. 17-ին, թ. 569. Սինոդը լսելով Երևանի աթոռապատկան կրպակների նորոգութեան գործը՝ որոշեց թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ծախսել 570 ռուբ. կրպակների լրացուցիչ նորոգութեան համար։

Սեպտ. 17-ին, թ. 570. Որովհետև Մ. Աթոռի Եղուարդ գիւղի կապալառուները արդէն յանձնել են Մ. Աթոռի շտեմարանին հասանելի բահրան, Սինոդը որոշեց պատուիրել գանձապահին վերադարձնել նոցա գրաւական 3000 ռուբլին։

Սեպտ. 17-ին, թ. 572. Սինոդը լսելով Երևանի գաւառի Աղբաշ գիւղի ծխականների խնդիրը՝ որոշեց. թոյլ տալ այդ գիւղի ծխականներին իրանց եկեղեցու դրամագլխից ծախսել 960 ռուբլի Աղբաշ գիւղի եկեղեցու նորոգութեան համար։

Սեպտ. 17-ին, թ. 573. Սինոդը լսելով Նորին Սրբութեան ամսոյս 8-ի, թ. 2022 կոնդակը՝ որոշեց. յանձնարարել Սինոդի անդամ Տ. Յուսիկ վարդապետին Կառավարչական Մասի գործավարի օժանդակութեամբ կազմել

Մայր աթոռի և բոլոր վանքերի անշարժ գույքի ցուցակը (инвентарь) և մատուցանել Նորին Սրբութեան մինչև տարեւոյս դեկտեմբերի սկիզբը։

Սեպտ. 17-ին, թ. 574. Սինոդը լսելով Երևանի կոնսիստորիայի անցած յուլիսի 29-ի, № 5378 յայտարարութիւնը Բաշ Գառնի գիւղի մօտ գտնուած «Ամենափրկիչ» (Հաւուց թառ) ուխտատեղու անուշադիր թողնուած դրութեան մասին՝ որոշեց. յանձնել այդ ուխտատեղու հսկողութիւնը Բաշ Գառնու գործակալ Թադէոս քահանայ Տէր Յարութիւնեանին։

Սեպտ. 20-ին, թ. 578. Սինոդը որոշեց. թոյլ տալ Շամախու կոնսիստորիային հրապարակական աճուրդախօսութեամբ վարձու տալ Մեյսարու Ս. Աստուածածին վանքին պատկանեալ հողերը վեց տարի ժամանակով, և աճուրդախօսութեան հետևանքի մասին տեղեկացնել Սինոդին։

Սեպտ. 22-ին, թ. 583. Սինոդը քննելով Երևանի աթոռապատկան կալուածոց կառավարչի 1907 թուականի հաշիւները, որոշեց. կանոնաւոր համարել Երևանի աթոռապատկան կալուածների կառավարչի 1907 թուի հաշիւները և այս գործը կարճել։

Սեպտ. 22-ին, թ. 585. Սինոդը որոշեց. առաջադրել Երևանի փոխ-թեմակալին, օրէնքի XI հատ. 1255 յօդ. 1 կէտի համաձայն, կարգել հոգևորականների որբոց և այրեաց խնամատար հոգաբարձութեան անդամներ։

Սեպտ. 23-ին, թ. 586 Սինոդը լսելով Նորին Սրբութեան անցեալ սեպտեմբերի 8-ի, № 1997 կոնդակը, որոշեց. համաձայն Վեհափառ Հայրապետի կոնդակի Սուրմալու գաւառի Մուրշուդ-Ալի գիւղի Սիմէօն քահանայ Մատթէոսեանին զրկել հոգևոր կոչումից նրա գինեմոլ բնաւորութեան համար։ Այս մասին յայտնել Երևանի նահանգապետին։

Սեպտ. 24-ին, թ. 589. Սինոդը լսելով Մայր Աթոռի միաբան Մեսրոպ արքեպիսկոպոսի անցեալ սեպտեմբերի 20-ի յայտարարութիւնը Երուսաղէմ գնալու համար իրան արձակուրդ տալու մասին, որոշեց. տալ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսին վկայական, որ արտասահմանեան անցագիր ստանայ։